



*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՕՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ (ՀԶՀԾ)*

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից: Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Արամ Ներսիսյանի կողմից: Հաստատվել է՝ համայնքի ավագանու 19.01.2017թ. թիվ 7-Ն որոշմամբ:

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ուղերձը	
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	
2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	
2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը	
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	
2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն	
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	
3.1 Համայնքի զարգացման տեսլական	
3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	
5. ՀՀԶԾ մշտադիտարկումը (մոնիթորինգ)	
6. ՀՀԶԾ վերաբերյալ իրազեկում.....	
7. ՀՀԶԾ իրականացումը	
8. ՀՀԶԾ գնահատում	
9. ԵԶԴԱՓԱԿՈՒՄ	
Համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը ...	
Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը	
- Հապավումների ցանկ	
- Ծրագրերի անձնագրեր	

1. Համայնքի ղեկավարի ուղերձը

ՀՀ Արագածոտն մարզի Օշական համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր: ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և

կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՖՄ ՀԿ փորձագետների կողմից մշակված և ՀՀ ՏԿԱԻՆ կողմից 2016 թվականին հավանության արժանացած՝ «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանությունը» (այսուհետ՝ Մեթոդաբանություն): ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

□ համայնքի ֆինանսական կարողությունը.

□ համայնքում առկա ենթակառուցվածքային և մատուցվող հանրային ծառայությունները.

□ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի առանձնահատկությունները.

□ համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ, 4
ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի հանրային ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը, նոր ծառայությունների մատուցմանը վերաբերող և դրանցով պայմանավորված՝ լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) և դրանց կառավարման միջոցառումները: ՀԶՀԾ-ն մշակելիս ուսումնասիրվել է նաև Աշտարակ համայնքի նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման ծրագրերը, միտումները և դրանց շարունակականության հնարավորությունները: Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: ՀԶՀԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, ՔՀՄՀ կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լրակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Օշականի հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 25 կմ, մարզկենտրոնից՝ 5 կմ: Գյուղը գտնվում է Քասախ գետի հովտում՝ ծովի մակարդակից 1020 մ բարձրության վրա: Քասախ գետն էլ գյուղը բաժանում է 2 մասի: Կլիման մերձարևադարձային, չոր ցամաքային է, շոգ ու չորային ամառներով, չափավոր ցուրտ ձմեռներով: Յուրիսին միջին ջերմաստիճանը տատանվում է 25-26 °C սահմաններում, հունվարին՝ -4 °C է: Տարեկան մթնոլորտային տեղումները կազմում են 350 մմ: Գյուղում է գտնվում Դիդի կոնդ կոչվող բլուրը, որն առաջացել է լավային գոյացումներից: Ըստ ավանդության՝ [Նոյ](#) նահապետն ու իր ընտանիքը [Մասիսի](#) գագաթից իջնելուն պես տեսնում են Օշականը ջրից ազատված և բացականջում են. «Օշ ական», որ նշանակում է «Երանի աչքերին»: Գտնվելով [Արշակունիների](#) արքայական ոստանում՝ Օշականը եղել է նրանց սեփականությունը: Ըստ [Կոռյունի](#)՝ Օշականում գտնվում է գերեզմանատուն, որտեղ թաղվում էին քրիստոնեական հավատի համար նահատակվածները: Վահան Ամատունի իշխանն իր ուսուցիչ [Մեսրոպ Մաշտոցի](#) դին էջմիածնից տեղափոխում է Օշական, որտեղ էլ նրա աճյունը հանձնվում է հողին: Երեք տարի անց՝ [442-443](#) թթ., գերեզմանի վրա կառուցում են եկեղեցի-դամբարանը, որը [1875-1879](#) թթ. վերածվում է եկեղեցու: Գյուղի շրջակայքում է գտնվում մ.թ.ա. 7-5-րդ դարերում կառուցված Օշականի բերդ-ամրոցի ավերակները: Օշականն Ամատունի նախարարների կենտրոն է դարձել Հայոց թագավոր [Խոսրով Բ](#) Արշակունու օրոք ([330-338](#)) թթ.: Օշականը՝ որպես բերդ, առաջին անգամ հիշատակվում է պատմիչ [Փավստոս Բուզանդի](#) կողմից 4-րդ դարի 1-ին կեսի անցքերի կապակցությամբ: Գտնվելով Արշակունիների արքայական ոստանում՝ Օշականը եղել է նրանց սեփականությունը: [336](#) թ.-ին Մազբեթաց Սանեսան թագավորի դեմ կռիվներում ցուցաբերած սխրագործությունների համար Հայոց թագավոր [Խոսրով Բ Կոտակնայն](#) ընծայել է Վահան Ամատունուն: Վկայություններ կան, որ Մեսրոպ Մաշտոցը Օշականում հիմնադրել է դպրոց: Ամատունիների նախաձեռնությամբ Օշականում է թաղվել Մեսրոպ Մաշտոցը. [442](#) թ.-ին նրա գերեզմանի վրա կառուցվել է գմբեթավոր կլոր եկեղեցի: Իր կառույցներով և բերքառատ այգիներով Օշականը հետագայում էլ եղել է Հայաստանի նշանավոր գյուղերից մեկը:

Համայնքի վարչական տարածքի, առկա և մշտական բնակչության, տնային տնտեսությունների ցուցանիշները

h/h	Բնակավայրի անվանումը	Վարչական տարածքը	Առկա բնակչության թվաքանակը /մարդ/	Մշտական բնակչության թվաքանակը /մարդ/	Առկա տնայինտնտեսությունների թվաքանակը	Մշտական տնայինտնտեսությունների թվաքանակը
	Օշական	1694.33	6002	5620	1530	1492

--	--	--	--	--	--	--

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության առկա թիվը 6002 մարդ, որից կանայք 3010, տղամարդ 2992: Ընտանիքների /ծխերի/ թիվը՝ 1525:

Բնակչության տարիքային կազմը հետևյալն է՝

0-4 տարեկան – 258 մարդ

5-7 տարեկան – 177 մարդ

8-15 տարեկան – 522 մարդ

16-62 տարեկան – 4121 մարդ

63 և ավելի տարեկան – 927 մարդ

Բնակչության սոցիալական կազմն այսպիսին է՝

- աշխատունակ բնակչություն – 4100 մարդ
- փախստականներ – 15 մարդ
- պատերազմի մասնակիցներ – 18 մարդ
- կենսաթոշակառուների թիվը – 860 , այդ թվում տարիքային և աշխատանքային թոշակառուներ՝ 144 մարդ
- հաշմանդամներ – 62 մարդ
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 33 մարդ
- գործազուրկներ – 657 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 1658
- ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների թիվը – 296 , այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը – 147:

Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Տեղական ինքնակառավարման համակարգը արդեն թևակոխել է գործնական ծրագրերի իրականացման փուլ: Համայնքապետի ղեկավարությամբ օրեցօր մեծ տեղ է հատկացվում նոր հարաբերությունները կյանքի կոչելու խնդիրներին ու դրանց իրականացմանը: Ավելի մոտ գտնվելով բնակչությանը և քաջատեղյակ լինելով համայնքի առանձնահատկություններին, հանդիսանալով իշխանության առանձին օղակ, այսօր ինքնուրույն ձևով և անձնական պատասխանատվությամբ են լուծվում համայնքի առջև ծառացած խնդիրներն ու հարցերը: Բնակֆոնդի և հասարակական վայրերի սպասարկում, սանիտարական մաքրում, աղբահանություն, կանաչապատում և լուսավորում, կրթական, մշակութային և մարզական կազմակերպությունների սպասարկում: Ահա այն կարևոր բնագավառների ոչ լրիվ ցանկը, որոնք սպասարկում է տեղական ինքնակառավարման մարմինը: Համայնքապետարանի մշտական ուշադրության կենտրոնում են խմելու և ոռոգման ջրամատակարարման, կապի, տրանսպորտի սպասարկման բարելավման, փոքր և միջին բիզնեսի զարգացման

հարցերը: Սակայն նշված և ևս կարևոր շատ հարցերի լուծման ճանապարհին դժվարություններ են առաջանում կապված ֆինանսական միջոցների հետ: Համայնքի ամբողջ տարածքում բնակչության հետ անմիջականորեն տարվող աշխատանքները կոորդինացվում, համայնքի ղեկավարի ընդունած որոշումների ու կարգադրությունների մասսայական աշխատանքներին աջակցում են “Տարածքային կառավարման տեղամասերը” (ՏԿՏ-ները): 9 2016թ. Սեպտեմբերի 18-ին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում ընտրվել են համայնքի ղեկավարը, համայնքի ավագանին՝ բաղկացած 11 անդամից: Համայնքի ղեկավարն ունի 1 տեղակալ: Համայնքի ավագանին 2016 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 27 որոշմամբ հաստատել է համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ Աշխատակազմ -18

Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը ներկայացված է հավելվածի տեսքով: Համայնքի ավագանին 2016 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 27 որոշմամբ հաստատել է համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի հողօգտագործման ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի հողօգտագործման ցուցանիշները

Համայնքի հողերն ըստ նշանակության	Հա
Համայնքի վարչական տարածքը	1694.33
Գյուղատնտեսական հողեր	1081.87
Արոտավայր	156.22
Վարելահողեր	353.92
Խոտհարք	-----
Այլ հողեր	419.00
Բնակավայրերի հողեր	323.33
Բնակելի կառուցապատման	238.68
Հասարակական կառուցապատման	10.98
Խառը կառուցապատման	0.59
Ընդհանուր օգտագործման	38.22
Այլ հողեր	34.86
Արտադրական նշանակության հողեր	136.94
Էներգետիկայի տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողեր	24.95
Անտառային հողեր	-----
Հատուկ պահպանության	108.65
Հատուկ նշանակության	-----
Զբային	18.59

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հողային ստրուկտուրան խիստ փոփոխական է համեմատած այլ շրջանների հետ: Մի փոքր հողակտորում կարող է լինել և սևահող, և գորշ շագանակագույն հող և անօգտագործելի տարածք: Դարերի ընթացքում մշակվել է խաղող, որից ստացված գինիները աշխարհում մեծ համբավ են վայելում: Գերակշիռ մասն է կազմում նաև պտղաբուծությունը, որը վերջին 10 տարիների ընթացքում մեծ առաջխաղացում է ապրել: Գյուղացիական տնտեսությունները զբաղվում են բանջարաբուստանային կուլտուրաների մշակմամբ, որը մասամբ է բավարարում քաղաքի առօրյա պահանջներին: Վերջին մի քանի տարիների ընթացքում բնակչությունը զբաղվում է նաև հացահատիկի, անասնապահական մթերքների արտադրությամբ, որը նույնպես չի բավարարում քաղաքի պահանջներին: Գյուղատնտեսական զարգացմանը խոչընդոտում են գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարությունները, նախ և առաջ գյուղ. մթերքների ցածր գները, ոռոգման հետ կապված դժվարությունները, գյուղատնտեսության կարիքներին արձագանքելու անհրաժեշտ օղակների թերզարգացած վիճակը կամ իսպառ բացակայությունը /ագրոսպասարկման, ֆինանսավարկային, ապահովագրական/ և այլն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքի բյուջեի զգալի մասը ձևավորվում է հողի հարկից, պոտենցիալ հարկատուների տնտեսական վիճակը ձեռք է բերում կարևորագույն նշանակություն: Իհարկե չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ այդ հարցը առնչվում է նաև զբաղվածության, պարենային և այլ կարևորագույն խնդիրների հետ: Արոտավայրերի ջրարբիացվածության մակարդակն անբավարար վիճակում է:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Օշականը անխոս ունի հրաշալի բնություն: Օշականի միջով է անցնում Հայաստանի ամենագեղատեսիլ գետերից մեկը՝ Քասաղ գետը, որն իր խորունկ ժայռերով դյուբիչ տպավորություն է թողնում Օշական այցելած յուրաքանչյուր մարդու վրա: Խորը ազդեցություն է թողնում նաև հին կամուրջը, որը վերանորոգումից հետո ներկայացնում է հնի և նորի միաձուլումը: Օշականը միշտ առանձնացել է իր հարուստ և փարթամ բնությամբ, սակայն 90-ական թվականների ծանր ճգնաժամային տարիներն իրենց հետևանքը թողեցին, որի արդյունքում հսկայական հեկտարներով ֆաունա ոչնչացան, Քասախի կիրճում գտնվող ծառերը:

ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Օշականում գործում է երկու ավտոմոբիլային կամուրջներ: Օշականի ճանապարհային երթևեկության նշանների մեծ մասը տեղադրված են, և նախատեսվում է դրանց թիվը ավելացնել: Համայնքի տարածքում մարդատար և երթուղային տաքսիների սպասարկման մակարդակը գտնվում է լավ վիճակում:

Օշական համայնքն ունի ներհամայնքային 50 կմ փողոցներ և ճանապարհներ: Ճանապարհների եւ փողոցների մեծ մասն անբարեկարգ է:

Օշականը, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի եւ պատմական հարուստ ժառանգության, հետաքրքրություն է ներկայացնում և տուրիստական համայնք վերածվելու բոլոր հնարավորություններն ունի: Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցը ապահովում է գյուղի անհրաժեշտ գիշերային լուսավորության ծածկույթի 15 %-ը: Գյուղի լուսավորությունն առաջնային կարեւորության հարցերից է և անհրաժեշտ է կտրուկ ընդլայնել լուսավորության ցանցը:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առևտրական, հասարակական սննդի, կենցաղային, տեխնիկական և այլ տիպի սպասարկումների զարգացումը հնարավորություն է տալիս աստիճանաբար բնակչության սոցիալական ոլորտի հետ կապված հարցերի լուծումը ապակենտրոնացնել և ծանրության կենտոնը տեղափոխել մասնավոր սպասարկումների վրա: Դա հնարավորություն է ստեղծում ազատ մրցակցության, և դրա շնորհիվ սպասարկումների որակի բարելավման ու գների աճի զսպմանը: Զարգացումը տանում է առևտրի և սպասարկումների մանր, անկազմակերպ և տարերային ձևերից դեպի փոքր ու միջին կայուն, ստացիոնար ձևերի: Ձևավորվում է որոշակի կայուն եկամուտներ ունեցող մի խավ: Վերջինս վճարունակ է ոչ միայն գույքի, այլև արտադրական տարածքի դիմաց, ինչպես նաև տեղական տուրքերի գծով: Այդ խավը պոտենցիալ կերպով կարող է դիտվել, որպես ազատ միջոցների առաջանալուն զուգընթաց՝ այլ ճյուղերում ներդրումներ կատարող և դրանց զարգացմանը նպաստող ուժ: Իսկ որպես հետևանք նա դառնում է նաև գործատու և աշխատատեղեր ստեղծող:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքի կրթական համակարգը ներառում է 1 հիմնական, 1 միջնակարգ դպրոցները:

Համայնքում գործում է 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Հաճախում է 200 սան, աշխատում է 48 մարդ: Գործում է նաև 1 երաժշտական դպրոց, որտեղ հաճախում է 48 աշակերտ: Դպրոցն ունի 14 աշխատակից: Վերանորոգման, լրկալ ջեռուցման և գազաֆիկացման կարիք ունեն և մանկապարտեզի և մշակույթի պալատի շենքերը:

ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏՍՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գյուղը հարուստ է մշակութային օջախներով, Գործում է մշակույթի պալատ՝ 350 նստատեղով, որտեղ հաճախում է 248 աշակերտ, աշխատում է 12 մարդ: Գործում է Ժ. Աբելյանի անվան համայնքային գրադարանը՝ 20000 կտոր գրքով, աշխատում է 2 մարդ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում աշխատում է Օշականի մանկական վերականգնողական կենտրոնը, որը գտնվում է ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ:

Համայնքապետարանը կազմակերպում և անց է կացնում ներհամայնքային ֆուտբոլի, շաշկու, շախմատի մրցումներ:

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքում գործում է 4 հանգստի գոտիներ:

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կան 4121 աշխատունակ մարդիկ, որոնցից 654-ը գործազուրկ են:

Համայնքի 296 ընտանիքներ հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 147 ընտանիքները (ընդհանուրի կեսից ավելին):

Համայնքում բնակվում են 62 հաշմանդամներ և միակողմանի ծնողազուրկ 33 երեխա:

ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական կայքը, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը եւ բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Համայնքապետարանում և գյուղի կենտրոնական հատվածներում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտար-հիգիենիկ ծառայությունների եւ այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Օշականի Քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են Քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը գյուղում գործող 20 մասնավոր խանութների և 5 փոերի սեփականատերերն են, որոնք նպաստում են գործարար միջավայրի ձևավորմանը:

Համայնքում իրականացվող ծրագրերը

2017-2021թ.թ. ընթացքում համայնքի ՏԻՄ-երը նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի և այլ շահագրգիռ կողմերի հետ: Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017- 2021թթ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝

• պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով՝ Համայնքի Գայանե մանկապարտեզ ՀՈԱԿ-ի մասնակի հիմնանորոգում, Անահիտ մմ ՀՈԱԿ-ի մասնակի հիմնանորոգում, Պատմական միջուկի վերականգնում՝ նպաստելով համայնքում զբոսաշրջության • զարգացմանը՝ Համայնքի արտադրողական կազմակերպության համար գույքի ձեռքբերում՝ բարելավելով արտադրողական կրթության որակը, Համայնքի բանուկ որոշ թաղամասերի գազաֆիկացում, գազամատակարարման • ներքնակավայրային համակարգի ստեղծում և շահագործում, ներգրավելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին, Համայնքապետարանի վարչական շենքի 1-ին հարկի և հենապատի հիմնանորոգում, հենապատի կառուցում, համայնքապետարանի վարչական շենքի գազաֆիկացում, Համայնքի ասֆալտապատ փողոցների հիմնանորոգում, Մշակույթի պալատ ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի կառուցում և գույքի ձեռքբերում Հասրակական տրանսպորտի աշխատանքի բարելավում, համայնքի կենտրոնական փողոցում կանգառների կառուցում, ներգրավելով մասնավոր • տրանսպորտային կազմակերպություններին՝ Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի • 24 բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում՝ Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, • արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում: 2017-2021թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Արագածոտնի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները:

Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակ

Ներհամայնքային փողոցների գիշերային լուսավորվածության ընդլայնման անհրաժեշտություն

Համայնքում մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանման և հետագա զարգացման անհրաժեշտություն :

Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի ֆինանսական իրավիճակը կանխատեսված է առաջիկա 5 տարիների կտրվածքով և հստակ երևում է, որ միայն համայնքի սեփական եկամուտներով կամ տեղական բյուջեի միջոցներով հնգամյա ծրագրում նախատեսվող աշխատանքների իրականացումը իրատեսական չէ և պետք է ներգրավվեն այլ միջոցներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

h/h	ՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ փաստ.	2016թ. հաստ	2017թ. կանխ	2018թ. կանխ.	2019թ. կանխ	2020թ. կանխ	2021թ. կանխ.	2016թ. 2015թ. նկատ. %	2017թ. 2016թ. նկատ. %	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)		
											2015թ.	2016թ	2017թ
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	115414.7	129273.4	135581.5	136720.9	137960.9	140220.9	140220.9	112.0	104.9	100.0	100.0	100.0
1	Հողի հարկ	8726.5	8656.2	9007.9	9500.0	10000.0	11500.0	12000.0	99.2	104.1	7.7	6.7	6.7
2	Գույքահարկ	14883.	21684.5	26587.8	27000.0	27500.0	28000.0	28500.0	145.7	122.6	12.9	16.8	19.6
3	Տուրքեր	328.0	319.0	1092.2	1300	1500	1700	1800	97.3	342.4	0.3	0.2	0.8
4	Պաշտոնական դրամաշնորհներ	90898.8	98329.9	98570.9	98570.9	98570.9	98570.9	98570.9	108.2	100.2	78.8	76.1	72.7
5	Այլ եկամուտներ	578.3	283.8	302.7	350.0	390.0	450.0	470.0	49.1	106.7	0.5	0.2	0.2

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ա) ըստ գործառական դասակարգման

h/h	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ. փաստ .	2016թ. հաստ	2017թ. կանխ	2018թ. կանխ.	2019թ. կանխ	2020թ. կանխ	2021թ. կանխ.	2016թ. 2015թ. նկատ. %	2017թ. 2016թ. նկատ. %	Տեսակարար կշիռն ընդհանուրի մե (%)		
											2015թ.	2016թ	2017
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	112499 .0	136083. 5	207993. 0	136720.9	137960.9	140220. 9	140220.9	121.0	152.8	100	100	100
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	31129. 2	91118.1	50863.3	41000.0	42000	42500	43000	292.7	55.8	27.7	67.0	24.5
2	Պաշտպանություն	0	0	0	00	0	0	0	0	0	0	0	0
3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
4	Տնտեսական հարաբերություններ	- 1136.1	- 52312.6	60926.0	4400.0	4600.0	4200.0	4000.0	4604.6	116.5	-1.0	-38.4	29.3
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	1384.7	2673.0	3405.0	3600.0	3700.0	4000	4200	193.0	127.4	1.2	2.0	1.6
6	Բնակարանային և շինարարություն և կոմունալ ծառայություն	807.2	5555.0	2850.0	3000.0	3500.0	3900.0	4000	688.2	51.3	0.72	4.1	1.4
7	Առողջապահություն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	15200. 0	15200.0	16200.0	16200.0	16500.0	17000	17000	100	106.6	13.5	11.2	7.8

9	Կրթություն	64114.0	72450.0	72148.7	64420.9	63760.9	64120.9	63320.9	66.2	99.6	57.0	53.2	34.7
10	Սոցիալական պաշտպանություն	1000.0	1400.0	1600.0	1600	1600	1600	1600	140	114.3	0.9	1.0	0.8
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	-	6500	6900	6900	6900	7100	7100	0	0	0	0	0
	հավելուրդ	2915.7	6810.1	72411.5									

բ) ըստ տնտեսագիտական դասակարգման (հազար դրամ)

h/h	ԾԱԽՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ. փաստ.	2016թ. հաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2016թ. 2015թ. նկատ. %	2017թ. 2016թ. նկատ. %	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)		
											2015թ.	2016թ.	2017թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	112499.0	136083.5	207993.0	136720.9	137960.9	140220.9	140220.9	121.0	152.8	100	100	100
Ա	ԸՆԹԱՅԻՆ ԾԱԽՄԵՐ	112499	122773.4	129241.1	136720.9	137960.9	140220.9	140220.9	108.0	105.3	101.0	90.2	62.1
1	Աշխատանքի վարձատրություն	29394.9	31700.8	36407.7	36407.7	38500	38500	38500	107.8	114.8	26.1	23.3	17.5
2	Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	83102.8	89412.6	10553.4	10700	10700	11000	11200	107.6	11.8	73.9	65.7	5.0
3	Տոկոսավճարներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
4	Սուբսիդիաներ	0	0	2400.6	2400.6	2400.6	2400.6	2400.6	0	100	0	0	1.2
5	Դրամաշնորհներ	0	0	77999.4	78712.6	77860.3	79620.3	79620.3	0	100	0	0	37.5

6	Մոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	1000	1400	1600	1600	1600	1600	1600	140	114.3	09	1.0	0.8
7	Այլ ծախսեր	137.4	260.0	280.0	6900.0	6900.0	7100	7100	189.2	107.7	0.1	0.2	0.1
Բ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՄԵՐ	12794.5	16384 4.2	81125.9	9400.0	9600.0	10000	10200	1280.6	49.5	11.4	120.4	39.0
1	Հիմնական միջոցներ	12794.5	16384 4.2	81125.9	9400.0	9600	10000	10200	1280.6	49.5	11.4	120.4	39.0
Գ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	-1136.1	- 150534 .1	-2374.0	-2500.0	-2700.0	-2900.0	-3100.0	13250.1	1.6	-1.0	-110.6	-1.1
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-1136.1	- 15053 4.1	-2374.0	-2500.0	-2700.0	-2900.0	-3100.0	13250.1	1.6	-1.0	-110.6	-1.1

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ

ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ. փաստ	2016թ. հաստ	2017թ. կանխ	2018թ. կանխ.	2019թ. կանխ	2020թ. կանխ.	2021թ. կանխ	2016թ. 2015թ. նկատ. %	2017թ. 2016թ. նկատ. %
Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը (հազար դրամ)	0.0	6500.0	6900.0	6900.0	6900.0	7100.0	7100.0		106.2

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՆ ՕՐԵՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐԸ

h/h	Տրանսֆերտի անվանումը	2015թ. փաստ	2016թ. հաստ.	2017թ. կանխ	2018թ. կանխ	2019թ. կանխ	2020թ. կանխ.	2021թ. կանխ	2016թ. 2015թ. նկատ. %	2017թ. 2016թ. նկատ. %
	ԸՆԴԱՄԵՆԸ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	90084.8	98329.9	97822.2	97822.2	97822.2	97822.2	97822.2	109.2	99.5
1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	86572.9	95421.6	95421.6	95421.6	95421.6	95421.6	95421.6	110.2	100
2	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ, այդ թվում	1111.3	507.7	0	0	0	0	0	45.7	0
	բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ	1111.3	507.7	0	0	0	0	0	45.7	0
3	Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար տրամադրվող նպատակային հատկացումներ (ընթացիկ սուբվենցիաներ)	2400.6	2400.6	2400.6	2400.6	2400.6	2400.6	2400.6	100	100

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԸ

h/h	Դրամաշնորհի անվանումը	2015թ. փաստ	2016թ. հաստ.	2017թ. կանխ	2018թ. կանխ	2019թ. կանխ	2020թ. կանխ.	2021թ. կանխ	2016թ. 2015թ. նկատ. %	2017թ. 2016թ. նկատ. %
	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	814.0	0	748.7	748.7	748.7	748.7	748.7	0	0
1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների ՏԻՄ-երից	814.0	0	748.7	748.7	748.7	748.7	748.7	0	0

Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- Պատմամշակութային հարուստ ավանդույթները
- Հին գյուղի գրավիչ ճարտարապետական տեսքը
- Տուրիզմի զարգացման հնարավորությունները
- Տարածաշրջանային առողջապահական կենտրոնի առկայությունը
- Տարածաշրջանում հասարակական կազմակերպությունների լայն սպեկտրի առկայությունը
- Լրատվամիջոցների առկայությունը
- Փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը
- արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում
- փողոցների ոչ բարվոք վիճակը
- բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- Զբոսաշրջության զարգացումը
- Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը
- Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, կարկտահարություն և ցրտահարություն)
- Գործազրկության մակարդակի աճը
- Բնակֆոնդի վիճակի վատթարացումը

- Արտագաղթը

Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Համայնքի զարգացման տեսլական

Օջականը բնակչությանը և զբոսաշրջիկներին որակյալ ծառայություններ մատուցող և սոցիալ – տնտեսական բնականոն զարգացում ապահովող համայնք է, որտեղ զարգացած են միջազգային տուրիզմն ու էկոտուրիզմը, և որտեղ ստեղծված է ներդրումների համար մրցունակ միջավայր, իսկ բնակիչներն ապրում են բարեկեցիկ կյանքով:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը**՝

- Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ
- Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- Պահպանել համայնքի ճարտարապետության արդի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները
